

Հաստատված է՝
«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան
պետական մանկավարժական ինստիտուտ»
ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի
« 26 » մայիսի 2012 թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի (այսուհետ՝ ԳՊՄԻ) ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ ՈՒԳԸ) ԳՊՄԻ-ի ուսանողներին (բակալավրներ, մագիստրանտներ, հետազոտողներ) միավորող կառուցվածքային ստորաբաժանում է:
- 1.2 ՈՒԳԸ-ն իր գործունեությունը ծավալում է՝ ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՄԻ-ի և սույն կանոնադրությամբ:
- 1.3 ՈՒԳԸ-ի կանոնադրությունը և նրանում կատարվող փոփոխությունները հաստատվում են ԳՊՄԻ-ի գիտխորհրդի կողմից՝ ՈՒԳԸ խորհրդի նախագահի ներկայացմամբ:
- 1.4 ՈՒԳԸ-ն ունի խորհրդանիշ:
- 1.5 ՈՒԳԸ-ն սահմանված կարգով կարող է ունենալ կլոր կնիք, անկյունային դրոշմ, պաշտոնաթուղթ, ենթահաշիվ՝ ԳՊՄԻ-ի բանկային հաշվում:
- 1.6 ԳՊՄԻ-ի ՈՒԳԸ անվանումը.
ռուսերեն՝ Студенческое Научное Ассоциация,
անգլերեն՝ Student Scientific Association:
Իսկ կարճ անվանումները՝ հայերեն՝ ՈՒԳԸ, ռուսերեն՝ CHA, անգլերեն՝ SSA:

2. ՈՒԳԸ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 2.1 ԳՊՄԻ-Ի ՈՒԳԸ նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:
- 2.2 ՈՒԳԸ-ն իր նպատակներն ու խնդիրները իրականացնում է գիտության և արտաքին կապերի բաժնի ղեկավարությամբ՝ համագործակցելով ինստիտուտի ամբիոնների, ուսանողական խորհրդի, արհկոմի և այլ ստորաբաժանումների հետ:
- 2.3 ՈՒԳԸ-ի խնդիրներն ու գործունեության հիմնական ուղղություններն են՝
 - 2.3.1 գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների սատարում և իրականացում,
 - 2.3.2 ուսանողական գիտաժողովների, սեմինարների, գիտահանրամատչելի դասախոսությունների և գիտական-կրթական ուղղվածություն ունեցող այլ միջոցառումների կազմակերպում,
 - 2.3.3 ԳՊՄԻ-ի երիտասարդական գիտական ներուժի նպատակաուղղված օգտագործում, նպաստում գիտական խմբերում և տարբեր գիտական ծրագրերում ուսանողների ընդգրկմանը,
 - 2.3.4 ԳՊՄԻ-ի ռեկտորատի համաձայնությամբ շնորհաշատ ուսանողների, հայցորդների և ասպիրանտների աջակցում,
 - 2.3.5 ուսանողների գիտական աշխատանքների և այլ նյութերի հրատարակում ինստիտուտի ռեկտորատի աջակցությամբ,
 - 2.3.6 այլ բուհերի ՈՒԳԸ-ների, գիտական կենտրոնների հետ կապի հաստատում:

3. ՈՒԳԸ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

• ՖԱԿՈՒԼՏԵՏՍՅՈՒՆ ՈՒԳԸ-ՆԵՐԸ

- 3.1 Ֆակուլտետային ՈՒԳԸ-ն ձևավորվում է տվյալ ֆակուլտետի ամբիոնների երաշխավորությամբ ներկայացված մեկական դասախոսներից:
- 3.2 Ֆակուլտետային ՈՒԳԸ-ն մշակում և իրականացնում է ծրագրեր, որոնք ուղղված են ՈՒԳԸ-ի նպատակների ու խնդիրների իրականացմանը:
- 3.3 Ֆակուլտետային ՈՒԳԸ-ի անդամներից ֆակուլտետի խորհուրդը ընտրում է տվյալ ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահին:
- 3.4 Ֆակուլտետային ՈՒԳԸ-ի նախագահը կազմակերպում է ֆակուլտետային ՈՒԳԸ-ի աշխատանքները, ներկայացնում է ֆակուլտետային ՈՒԳԸ-ն և նրա ծրագրերը ԳՊՄԻ-ի ՈՒԳԸ խորհրդում:
- 3.5 Ֆակուլտետային ՈՒԳԸ-ի նիստերը հրավիրվում են առնվազն ամիսը 1 անգամ: Նիստերը հրավիրվում են նախագահի կողմից կամ անդամների 1/3-ի պահանջով: Նիստն իրավազոր է, եթե ներկա են անդամների կեսից ավելին, իսկ որոշումներն ընդունվում են անդամների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ:
- 3.6 Ֆակուլտետային ՈՒԳԸ-ի նախագահը ի պաշտոնե հանդիսանում է ԳՊՄԻ-ի ՈՒԳԸ-ի խորհրդի անդամ:

• **ԳՊՄԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ**

- 3.7 ԳՊՄԻ ՈՒԳԸ-ի ղեկավար մարմինը ՈՒԳԸ-ի խորհուրդն է, որի նիստը գումարվում է ուսումնական կիսամյակում ոչ պակաս, քան երկու անգամ:
- 3.8 ՈՒԳԸ-ի խորհրդի կազմի մեջ մտնում են ԳՊՄԻ-ի ՈՒԳԸ նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը, ֆակուլտետային ՈՒԳԸ-ների նախագահները:
- 3.9 ՈՒԳԸ խորհուրդը.
- 3.9.1 քննարկում և որոշում է ԳՊՄԻ-ի ՈՒԳԸ-ի գործունեության կարևորագույն ուղղությունները, միջոցներ է ձեռնարկում որոշումների իրականացման համար, առաջարկություններ է ներկայացնում ԳՊՄԻ-ի գիտության և արտաքին կապերի բաժին,
- 3.9.4 մշակում է ՈՒԳԸ-ի ընթացիկ և հեռանկարային ծրագրերը, հաստատում և կոորդինացնում է ֆակուլտետային ՈՒԳԸ-ների աշխատանքները և ծրագրերը,
- 3.9.5 հաստատում է իր աշխատակարգը,
- 3.9.7 ստեղծում, վերակազմավորում և լուծարում է սույն կանոնադրությամբ չսահմանված ՈՒԳԸ աշխատանքային օղակները, ինչպես նաև հաստատում է նրանց կազմը և աշխատակարգը, ընդ որում նրանց կարող է լիազորել իր իրավասությանը վերաբերող որոշ հարցերի լուծման իրավունք,
- 3.9.7 որոշում է ընդունում շնորհել ՈՒԳԸ-ի պատվավոր անդամի կոչում և կանոնակարգում է ՈՒԳԸ-ի անդամությանը վերաբերող հարցերը, կանոնակարգը:
- 3.10 ԳՊՄԻ ՈՒԳԸ խորհրդի նիստն օրինական է, եթե նրան մասնակցում է անդամների ընդհանուր թվի ավելի քան 1/2-ը: Որոշումներն ընդունվում են ձայների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ: ՈՒԳԸ նախագահության արտահերթ նիստ կարող է հրավիրվել ՈՒԳԸ նախագահի, ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի անդամների 1/3-ի պահանջով:
- 3.11 ԳՊՄԻ-ի ՈՒԳԸ նախագահը հաստատվում է ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի կողմից երկու տարի ժամկետով ԳՊՄԻ-ի ռեկտորի կամ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտորի ներկայացմամբ: ՈՒԳԸ խորհուրդն ընտրում է նախագահի տեղակալ և քարտուղար:
- 3.12 ԳՊՄԻ-ի ՈՒԳԸ նախագահը ի պաշտոնե ներկայացնում է ՈՒԳԸ-ն, համակարգում է ՈՒԳԸ-ի կառուցվածքային միավորների համագործակցությունը:
- 3.13 ԳՊՄԻ-ի ՈՒԳԸ նախագահը տարեկան հաշվետվությամբ հանդես է գալիս ԳՊՄԻ-ի գիտական խորհրդում:
- 3.14 ԳՊՄԻ-ի ՈՒԳԸ նախագահի տեղակալը նախագահի բացակայության դեպքում ստանձնում է նրա լիազորությունները, համակարգում քարտուղարության աշխատանքները և ՈՒԳԸ նախագահության աշխատանքային օղակների գործունեությունը, հանդես գալիս կատարած աշխատանքների մասին գրավոր հաղորդմամբ:

4. ՈՒԳԸ-Ի ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 4.1 ՈՒԳԸ միջոցները գոյանում են ԳՊՄԻ-ի բյուջեից կատարվող մասնահանումներից, հովանավորների կողմից կատարվող հատկացումներից, ԳՊՄԻ-ի կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:
- 4.2 ՈՒԳԸ-ն անվճար, համաձայն սահմանված կարգի, օգտվում է ԳՊՄԻ-ի տարածքային, գույքային, տեխնիկական և այլ միջոցներից:
- 4.3 ՈՒԳԸ-ի միջոցները օգտագործվում են ՈՒԳԸ-ի նպատակների և խնդիրների իրականացման համար:

5. ՈՒԳԸ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

- 5.1 ՈՒԳԸ գործունեությունը կարող է դադարեցվել ԳՊՄԻ-ի գիտխորհրդի որոշմամբ:
- 5.2 ՈՒԳԸ-ի լուծարումից հետո նրա ամբողջ գույքը պատկանում է ԳՊՄԻ-ին: